ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե/2953-24 **0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47**

02 Դեկտեմբերի, 2024թ.

«ՀԵՏՔ»-Ի ԼՐԱԳՐՈՂ
ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ hovsepian.gay@gmail.com

Հարգելի՛ տիկին Հովսեփյան,

2024 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) մուտքագրված Ձեր թիվ Մ/3265-24 հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ Ծառայության նախկին աշխատակից Սուսաննա Մուրադյանի կողմից 2023 թվականի հունվարի 16-ին Ծառայության ղեկավարին է ներկայացվել զեկուցագիր՝ ««Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում (այսուհետ՝ Բժշկական կենտրոն) իրականացված ուսումնասիրության ընթացքում առկա շահերի բախման և ոչ ամբողջական ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ, որի հիման վրա Ծառայության կողմից իրականացվել է մշտադիտարկում, որի արդյունքում Ս. Մուրադյանի զեկուցագրով մատնանշված ռիսկերը չեն հիմնավորվել:

Այնուհետև Ս. Մուրադյանը կրկին մտահոգություն է հայտնել հիշատակված ուսումնասիրության արդյունքների օբյեկտիվության և լրիվության կապակցությամբ, ինչի առթիվ Ծառայության ղեկավարի տեղակալի զեկուցագրի հիման վրա՝ ղեկավարի հանձնարարությամբ, մեկնարկել է ծառայողական քննություն՝ Բժշկական կենտրոնում իրականացված ուսումնասիրության ընթացքում Ծառայության սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հնարավոր խախտումների դեպքերով:

Ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ս. Մուրադյանը, ներգրավված լինելով Ծառայության ղեկավարի 2022 թվականի մայիսի 2-ի թիվ Հ/015-22 հանձնարարագրով Բժշկական կենտրոնում մեկնարկված ուսումնասիրության խմբում և փաստացի գործընթացին մասնակցելով մինչև ուսումնասիրության ավարտը, «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» ծածկույթի շրջանակներում հայտնաբերել է ենթադրյալ խախտումներ, մինչդեռ այդ առթիվ նա չի կազմել միջանկյալ արձանագրություն կամ որևէ այլ փաստաթուղթ և չի ներկայացրել խմբի ղեկավարին կամ որևէ այլ պաշտոնատար անձի, այնինչ որպես տվյալ հարցն ուսումնասիրած պաշտոնատար անձ՝ հենց իր կողմից պետք է կազմվեր համապատասխան փաստաթուղթ՝

անհամապատասխանությունների արձանագրումների վերաբերյալ և ներկայացվեր խմբի ղեկավարին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ծառայողական քննությունը վարած պաշտոնատար անձի եզրակացության հիման վրա՝ Ս. Մուրադյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ և 446-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի հնարավոր առերևույթ հատկանիշներ պարունակելու կասկածանքով ծառայողական քննության արդյունքներն ու կից նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ հետագա ընթացքը որոշելու նպատակով:

Արդյունքում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինն անդրադարձել է ոչ միայն Ս. Մուրադյանի, այլ նաև ուսումնասիրությանը ներգրավված Ծառայության և Պետական առողջապահական գործակալության աշխատակիցների գործողություններին և կայացրել քրեական վարույթը կարճելու մասին որոշում՝ Ս. Մուրադյանի և ուսումնասիրությանը ներգրավված այլ աշխատակիցների գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատված լինելու հիմքով:

Հարկ է նշել, որ Բժշկական կենտրոնի և Ծառայության սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության նախկին պետ՝ Արթուր Բարսեղյանի միջև շահերի հնարավոր բախմանը ևս անդրադարձ է կատարվել հիշյալ քրեական վարույթը քննող քննիչի կողմից և պարզվել է, որ շահերի բախում առկա չէ:

Հարկ է նշել, որ Ա. Բարսեղյանը Ծառայության սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության պետի պաշտոնում է նշանակվել 2022 թվականի հուլիսի 18-ին, իսկ Բժշկական կենտրոնում ուսումնասիրությունը փաստացի ավարտվել է 2022 թվականի հուլիսի 15-ին, ուստի Ա. Բարսեղյանը գործնականում հնարավորություն չի ունեցել ներազդելու իրականացված և փաստացի ավարտված ուսումնասիրության գործընթացին:

Հարկ է նշել նաև, որ Բժշկական կենտրոնում իրականացված ուսումնասիրության ընթացքում որևէ խոչընդոտներ չեն եղել և ուսումնասիրող խմբին է տրամադրվել պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ իրազեկման մատյաններն ընտրանքային ուսումնասիրելու արդյունքում պարզվել է, որ դրանք լրացված են եղել, այդ իսկ պատճառով էլ դրանց անդրադարձ չի կատարվել տեղեկանքով:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ հաշվի առնելով ուսումնասիրության առարկա հանդիսացող փաստաթղթերի ահռելի ծավալը, Ծառայության և Պետական առողջապահական գործակալության աշխատակիցների սահմանափակ ռեսուրսները, ինչպես նաև կազմված աշխատանքային գրաֆիկն, օբյեկտիվորեն հնարավոր չի եղել Բժշկական կենտրոնում ուսումնասիրել բոլոր հիվանդության պատմագրերը, և ինչպես տվյալ Բժշկական կենտրոնում, այնպես էլ Ծառայության կողմից իրականացված և իրականացվող այլ բժշկական կազմակերպություններում հիվանդության պատմագրերը՝ կապված դրանց ծավալների հետ, գործնականում շատ դեպքերում ուսումնասիրվում են մասամբ և ընտրանքային կարգով:

Ինչ վերաբերում է ուսումնասիրության խմբի ղեկավար Դավիթ Այվազյանի ուսումնասիրության ներկա չգտնվելուն, ապա հայտնում եմ, որ վերջինս, միաժամանակ ընդգրկված լինելով այլ վերահսկողական գործողություններին (դիմումների քննարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն), համատեղությամբ անհրաժեշտ ժամանակահատվածով ներկա է գտնվել ուսումնասիրությանը ու պատշաճ կերպով կատարել է իր գործառույթները՝ այդ թվում իրականացնելով աշխատանքի բաժանում ուսումնասիրության խմբում ընդգրկված անդամների միջև:

Բժշկական կենտրոնում իրականացված ուսումնասիրության արդյունքներն ամփոփող տեղեկանքը կազմվել է Ծառայության ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 19-ի N 132-L հրամանով հաստատված՝ «ՀՀ պետական վերահսկողական ծառայության ուսումնասիրությունների իրականացման» կարգի համաձայն՝ հիմք ընդունելով կազմված միջանկյալ արձանագրությունները: Հարկ է նշել, որ Ս. Մուրադյանի կողմից միջանկյալ արձանագրություն չի կազմվել և ուսումնասիրությունն իրականացնող խմբի ղեկավարին չի ներկայացվել:

Այնուհետև՝ տեղեկանքը վերը նշված կարգի համաձայն ներկայացվել է Բժշկական կենտրոնին՝ կարծիք տրամադրելու նպատակով և, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004 թվականի N 318-Ն որոշման N 2 հավելվածի 42-րդ կետը, Բժշկական կենտրոնին առաջարկվել է արձանագրված խախտումների գումարը՝ 119,589,340 ՀՀ դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի մուտքերի համապատասխան հաշվեհամարին:

Բժշկական կենտրոնը Ծառայությանը ներկայացրած իր կարծիքով ամբողջությամբ չի ընդունել արձանագրված խախտումները, գումարներ չի վերականգնել և դատական կարգով վիճարկել է Ծառայության կողմից կազմված տեղեկանքի իրավաչափությունը:

Միաժամանակ Ծառայության կողմից տեղեկանքը և առնչվող նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ հնարավոր առերևույթ խախտումներին իրավական գնահատական տալու և հետագա ընթացքն ապահովելու համար, որի արդյունքում էլ ՀՀ քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ և իրականացվում է քննություն:

Հարկ եմ համարում նշել նաև, որ Ծառայության կողմից կազմված տեղեկանքները չեն հանդիսանում վարչական ակտեր, դրանցով պարտադիր կատարման ենթակա պահանջներ չեն նախատեսվում, և դրանք տեղեկատվական բնույթ կրող փաստաթղթեր են, որի վերջնական հասցեատերը՝ ՀՀ վարչապետն է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **ԳԱՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

X

Կատարող՝ **Դավիթ Այվազյան**
Ստորաբաժանում՝ **Սոցիալական ոլորտի վերահսկողության վարչություն**
Հեռ.՝ ***+374 (10) 31-31-41***